

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ և ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԿՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ

ԱԿՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԿՃԱՐԻ
ԵՎ ԱՅՐ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿԱՐՉԱԿԱՆ ԿԱՐՈՒՅԹԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ավտոկայանատեղերի համար տեղական վճարի (այսուհետ՝ վճար) վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանվում են վճար վճարողները, վճար վճարողների իրավունքներն ու պարտականությունները, վճարի դրույքաչափերը, վճարի սահմանման, գանձման կարգը և պայմանները, վճար չվճարելու համար պատասխանատվությունը, ինչպես նաև այդ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները։

2. Սույն օրենքի դրույթները տարածվում են միայն համայնքի ավագանու կողմից սահմանված՝ համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) կազմակերպված վճարովի ավտոկայանատեղերում (այսուհետ՝ ավտոկայանատեղ) ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը (այսուհետ՝ ավտոտրանսպորտային միջոց) կայանելու դեպքում ծագած հարաբերությունների վրա։

Հոդված 4. Ավտոկայանատեղի վճար վճարողները

1. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղիում կայանելու դեպքում ավտոկայանատեղի վճար վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե ավտոտրանսպորտային միջոցը պետական (պետական մարմին, պետական կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնք, համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (ամրակցված է), ապա համապատասխան պետական կամ համայնքային կազմակերպությունը։»

~~1. Ավտոկայանատեղի համար վճար վճարողներ են հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած ֆիզիկական և իրավաբանական անձինք:~~

~~2. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանած անձի կողմից ավտոկայանատեղի վճարը չվճարվելու դեպքում ավտոկայանատեղի վճար վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, իսկ եթե ավտոտրանսպորտային միջոցը պետական կամ համայնքային սեփականություն է՝ ապա այն անձը, որին ամրակցված է ավտոտրանսպորտային միջոցը:~~

Հոդված 9. Ավտոկայանատեղի վճարի դրույքաչափի սահմանումը և վճարման ձևերը

1. Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ:

2. Ընթացիկ տարվա համար ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

3. Նույն ավտոկայանատեղում միատեսակ ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար պետք է սահմանվի տուրքի միասնական դրույքաչափ:
բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ձեռնակատիրական գործունեության մեջ օգտագործելու և այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման դեպքերի, երբ ավտոկայանատեղի վճարը համայնքի ավագանու որոշմամբ կարող է սահմանվել այլ դրույքաչափերով: Ավտոտրանսպորտային միջոցը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու և այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման փաստը կարող է հիմնավորվել ավտոկայանատեղում կայանման, ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ համայնքի կողմից անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի (նկարահանող, տեսանկարահանող, ծայնաագրանշանային համակարգերի, սարքերի և այլն) կողմից իրականացված հսկողության արդյունքում հավաքագրված փաստական տվյալների հիման վրա:

Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը կարող են սահմանվել ըստ կայանատեղի, Երևան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների, այդ թվում՝ վարչական շրջաններում նաև գոտիավորման սկզբունքով, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ օրերի և օրվա ժամերի, ըստ շաբաթների, ամիսների և տարվա: Ընդ որում, համայնքի ավագանին կարող է սահմանել կանխավճարային կտրոնային համակարգ:

~~3. Նույն ավտոկայանատեղում միատեսակ ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար պետք է սահմանվի վճարի միասնական դրույքաչափ:~~

~~4. Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը կարող են սահմանվել ըստ կայանատեղի, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ օրերի և օրվա ժամերի, ըստ ամսվա և տարվա: Ընդ որում՝ ավագանին կարող է սահմանել կանխավճարային կտրոնային համակարգ:~~

Հոդված 10. Ավտոկայանատեղի վճարի դրույքաչափերը

1. Ավտոկայանատեղի վճարը գանձվում է Հայաստանի Հանրապետության դրամական արժույթով՝ դրամով:

2. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է վճար հետևյալ դրույքաչափերով՝

- 1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մինչև 300 դրամ ներառյալ.
- 2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մինչև 2500 դրամ ներառյալ.
- 3) մեկ շաբաթվա համար՝ մինչև 5000 դրամ ներառյալ.
- 4) մեկ ամսվա համար՝ մինչև 25000 դրամ ներառյալ.
- 5) մեկ տարվա համար՝ մինչև ~~1.000.000~~ ~~100000~~ դրամ ներառյալ:

Ընդ որում՝ մեկ ժամվա համար սահմանված վճարի գանձում իրականացնելու դեպքում սահմանվում է փաստացի կայանման համար թուղթերի հաշվարկման մեթոդ:

Հոդված 14. Արտոնությունները

1. Իրենց պարտականություններն իրականացնելու ժամանակ ավտոկայանատեղի վճարից ազատված են շտապ օգնության, ոստիկանության, արտակարգ իրավիճակների նախարարության, պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության ծառայության ավտոտրանսպորտային միջոցները:

~~1. Իրենց պարտականություններն իրականացնելու ժամանակ ավտոկայանատեղի վճարի վճարման արտոնությունից օգտվում են ոստիկանության, արտակարգ իրավիճակների և շտապ օգնության ավտոտրանսպորտային միջոցները՝ առկայծող փարոսիկները կամ հատուկ ծայնային ազդանշաններ արձակելու սարքավորումները միացրած լինելու դեպքում:~~

Հոդված 16. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պատասխանատվությունը ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար

1. Ավտոկայանատեղի վճարը չվճարելը առաջացնում է օրենքով նախատեսված վարչական պատասխանատվություն: Էլեկտրոնային համակարգերի միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 16-16.3-րդ հոդվածներով:

2. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չկատարելու համար վարչական պատասխանատվության միջոցի կիրառում նախատեսող վարչական ակտի հասցեատեր են համարվում ավտոտրանսպորտային միջոցի ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսանալու դեպքում՝ տվյալ ֆիզիկական անձը, իսկ ավտոտրանսպորտային միջոցը իրավաբանական անձի, պետական (պետական մարմին, պետական կառավարչական հիմնարկ, պետական հիմնարկ

կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնք, համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որևէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված է),` ապա այն անձը, որը իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնում խախտման կատարման պահին գրանցված է համապատասխանաբար տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար կամ աշխատակազմի ղեկավար (քարտուղար):

3. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չկատարելու համար օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը որպես վարչական մարմին կիրառում է համայնքի ղեկավարը, իսկ Երևան քաղաքում` Երևանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:

4. Եթե սույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները ուղղակիորեն չեն կարգավորվում սույն օրենքով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները:

~~1. Ավտոկայանատեղի վճար չվճարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:~~

16.1. ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՓՈՒԼԵՐԸ

1. Սույն օրենքով վարչական վարույթի պարզման փուլում ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստի ապացույցները ավտոկայանատեղիում տրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութը և (կամ) լուսանկարն է և տվյալ տրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալները:

2. Վարչական վարույթը բաղկացած է ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստի պարզման և վարչական ակտի ընդունման փուլերից:

16.2. ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻ ՎՃԱՐԸ ՉՎԱՏԱՐԵԼՈՒ ՓԱՍՏԻ ՊԱՐԶՈՒՄԸ

1. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստի պարզումը վարչական մարմնի կողմից ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութի և (կամ) լուսանկարի, այդ թվում` անհրաժեշտության դեպքում նաև դրանց համակցության, համադրումն է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալների հետ:

2. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստը համարվում է պարզված, եթե էլեկտրոնային համակարգերի միջոցով ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցի կայանումը արմագրած տեսանյութը և (կամ) լուսանկարը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալների հետ համադրելու արդյունքում կասկած չի հարուցում այն

հանգամանք, որ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա դրությամբ չի վճարվել սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում:

4. Եթե սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստը արձանագրվել է իրավաբանական անձի, պետական կամ համայնքային կազմակերպության սեփականություն հանդիսացող (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված) ավտոտրանսպորտային միջոցի մասով, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստը պարզելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնից պարզում է խախտման կատարման պահին տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար (աշխատակազմի ղեկավար, քարտուղար) հանդիսանալու փաստը:

16.3. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՑԵԱՏԻՐՈՋԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ, ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Վարչական վարույթ իրականացնող մարմինը վարչական ակտը պարտավոր է ընդունել սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չկատարելու փաստի պարզելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն օրենքի 16.2 հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում վարչական ակտի հասցեատիրոջը պարզելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Վարչական ակտն ընդունելուց հետո՝ այն երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է վարչական ակտի հասցեատիրոջը:

16.4. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Վարչական ակտը ներառում է՝

1) իրավախախտման տեղը, ժամը
2) զանձապետական հաշվեհամարը՝ նշանակված տո(զանքը վճարելու համար

3) լուսանկարը

4) օրենքով սահմանված այլ տվյալներ

2. Վարչական ակտի ձևը և նմուշը սահմանվում են վարչական մարմնի ղեկավարի հրամանով (որոշմամբ):

16.5. ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

«1. Ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ անմիջականորեն կամ էլեկտրոնային (լուսանկարող, տեսանկարահանող, ծայնաագոլանշանային համակարգեր և այլն) համակարգերի միջոցով հսկողություն իրականացնելու ընթացքում այլ օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների խախտումների հատկանիշներ հայտնաբերելիս համայնքները համապատասխան փաստական տվյալները փոխանցում են այն պետական (վարչական) մարմիններին, որոնք օրենսդրությամբ լիազորված են

կիրառելու տվյալ իրավախախտման համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ:

2. Համայնքները սույն հոդվածի 1-ին մասում նշված պետական (վարչական) մարմիններին կարող են տրամադրել նաև հասանելիություն ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ էլեկտրոնային (յուսանկարող, տեսանկարահանող, ծայնաագղանշանային համակարգեր և այլն) համակարգերին՝ այլ օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների խախտումների համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:

Հոդված 17. Ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելը

1. Եթե ավտոտրանսպորտային միջոցն առանց համապատասխան վճարի վճարման ավտոկայանատեղում կայանել է քառասունութ ժամից ավելի, ապա ավտոկայանատեղի կազմակերպիչն իրավունք ունի տվյալ ավտոտրանսպորտային միջոցն իր ուժերով տեղափոխելու դրա համար նախատեսված հատուկ տարածք (այսուհետ՝ հատուկ տարածք), եթե ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը կամ նրա լիազորած անձը կամ այն անձը, որին անրակցված է ավտոտրանսպորտային միջոցը, չի ստանձնում պարտավորություն վճարելու տեղական վճարն ու վճարը չվճարելու համար օրենքով նախատեսված տուգանքը: Ընդ որում՝ կազմակերպիչն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում ավտոտրանսպորտային միջոցն անվնաս տեղափոխելու համար:

1.1. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում առանց հաշվառման համարանիշի կամ հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելն արգելվում է և ենթակա է հատուկ տարածք տեղափոխման:

2. Ավտոտրանսպորտային միջոցի տեղափոխումը հատուկ տարածք իրականացվում է մեկ այլ տրանսպորտային միջոցի օգնությամբ, և այդ մասին անմիջապես պատշաճ ձևով տեղեկացվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը:

3. Կազմակերպիչը կազմում է ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ արձանագրություն, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Արձանագրության կրկնօրինակն ուղարկվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը:

4. Ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածքում պահպանելու ժամկետը հաշվվում է օրերով և ժամերով՝ սկսած հատուկ տարածքում այն տեղավորելու պահից:

5. Հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի պահպանման համար գանձվում է վճար՝

1) յուրաքանչյուր ժամի համար՝ մինչև տվյալ ավտոկայանատեղի համար սահմանված դրույքաչափի եռապատիկը ներառյալ.

2) յուրաքանչյուր օրվա համար՝ մինչև տվյալ ավտոկայանատեղի համար սահմանված դրույքաչափի եռապատիկը ներառյալ:

6. Հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցը դրա սեփականատիրոջը, նրա լիազորած անձին կամ այն անձին, ում կցված է այն,

հանձնվում է հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծախսերն
ամբողջությամբ փոխհատուցելուց հետո:

7. Հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցները
հաշվառվում են: Հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին: